**Արձանագրություն 4**

«ԳՀԱՇՁԲ-ՏԱԿ-ՁԻԱՀ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով տպագրական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 17 հոկտեմբերի 2017թ.
Անցկացման ժամը՝ 10:00
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Արշակ Ասմարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տիգրան Հովսեփյան
Ռուզաննա Թադևոսյան
Ալվինա Նազարյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Սոֆիա Գրիգորյան
Բացակայում էր հանձնաժողովի անդամ Արևիկ Պետրոսյանը:

## I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

**-------------------------------------------------------**

**(նախագահ՝ Արշակ Ասմարյան)**

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (16.10.2017թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցները՝ «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ն, Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ն, «Լիմուշ» ՍՊԸ-ն, «Հայկարլի» ՍՊԸ-ն և «Մինե» ՍՊԸ-ն չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

| N h/h | Գնահատման չափանիշը | Գնահատման արդյունքը | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | «ՄԻՍՄԱ» ՍՊԸ | Արման Ասմանգուլյան Ա/Ձ | «Լիմուշ» ՍՊԸ | «Հայկարլի» ՍՊԸ | «Մինե» ՍՊԸ |
| 1. | Մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ | համապա տաս-խանում է | համապատասխանում է | համապատասխանում է | համապատասխանում է | համապատասխանում է |

**Հանձնաժողովը որոշեց.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ի, Արման Ասմանգուլյան Ա/Ձ-ի, «Լիմուշ» ՍՊԸ-ի, «Հայկարլի» ՍՊԸ-ի և «Մինե» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հայտարարել ընտրված մասնակիցներ՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներին նախապատվություն տալու սկզբունքով.

**ա) Ընտրված (հաղթող) մասնակիցներ ճանաչել.**

N 1 չափաբաժնի համար «Լիմուշ» ՍՊԸ-ին:

N 2, N 4, N 5, N 14, N 15 և N 21 չափաբաժինների համար «Հայկարլի» ՍՊԸ-ին:

N 3, N 6, N 7, N 20 և N 22 չափաբաժինների համար Ա/Ձ Արման Ասմանգուլյանին:

N 8 չափաբաժնի համար «Մինե» ՍՊԸ-ին:

N 9-N 13, N 16-N 19 չափաբաժինների համար «ՄԻՍՄԱ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

## II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

--------------------------------------------------------

(նախագահ՝ Արշակ Ասմարյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը (18.10.17թ. մինչև 22.10.17թ.):

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

## III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

--------------------------------------------------------------------------------

(նախագահ՝ Արշակ Ասմարյան)

3.1 «ԳՀԱՇՁԲ-ՏԱԿ-ՁԻԱՀ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով տպագրական աշխատանքների ձեռքբերման գնման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, հասցեն՝ ք.Երևան, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, Աճառյան, 207 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա.Ասմարյան | ____________ (ստորագրություն) |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Տ.Հովսեփյան | ____________ (ստորագրություն) |
| | Ռ.Թադևոսյան | ____________ |

(ստորագրություն)

Ա.Նազարյան ____________________

(ստորագրություն)

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս.Գրիգորյան ____________________

(ստորագրություն)